

ՆԵՄԵՍԻՈՍԻ ԳԻՐՔԸ, ԵՒ ԴԵԶԱ ԻՏԱԼԱՑԻ ՂԱՅԱԳԻՏԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

(Ցես յ'էջ 442)

Յօդուածիս հեղինակը երկարօրէն կը խօսի, ինչպէս ար-
ժանն ալ կը պահանջէր յազգայնոյ մը, իտալական լեզուով եղած
հին ըստմասնեայ թարգմանութեանն վրայ, Դոմինիկոս Բից-
ցիմէնդի կոչուած անձի մը ձեռքով, որ ծաղկած է ի վելտա-
սաներորդ դարու, ծնեալ ի Մոնթէլէոնէ, և անուանի բժիշկ ու
մատենագիր. իր ժամանակակցաց համար ընդ բովանդակ իտա-
լիա հռչակուած, և ամենահմուտ յոյն և լատին լեզուաց: Այլ
և այլ յոյն հեղինակաց թարգմանիչ է նա, յորս մեծագոյն գովու-
թեան արժանաւոր՝ Դեմոկրիտոսի Աբղերացւոյ Զիրաց քնա-
կանաց և խորհրդականաց (De rebus naturalibus et mysticis) եր-
կասիրութիւնն: Նեմեսիոսի գրութեան մասն մի թարգմանուած է
իբրէ, և հետեւեալ խորագիրը կրող հին տպագրի մը հետ խառ-
նուած. Operetta d'un autor incerto, raccolta dal sapientiss. Solo-
mone e dal gran Basilio, della Natura degli animali, e tradotta da
greco in volgare da Domenico Pizzimenti. Գրութեան չունի ամենե-
ւին նմանութիւն, ոչ ըստ կարգաւորութեան բանից և ոչ ըստ
խմբատից՝ այն առաջին Բարոյախօսին հետ՝ զոր փոքա Տըլէոն
յոյն լեզուաւ և լատին թարգմանութեամբ հրատարակեց ի
1587, և ոչ ալ ուրիշ արեւելեայց ու արեւմտից ծանօթ համանուն
երկասիրութեանց հետ: Թարգմանիչն՝ յառաջին ընծայականին
կը խօսի « այս օգտակար ու ախորժական համառօտ գրութե-
քին վրայ՝ կենդանեաց բնութեան, զոր նախ գրեր է ամենի-
մաստունն Սոդոմոն. և յետոյ այլաբանաբար յարմարցուած առ-
տուածայնոց վրայ ի մեծէն Բասիլիոսէ »: Իսկ յերկրորդ ըն-
ծայականին՝ քննադատութեան խստութենէ վախնալով, վրայ կը
բերէ. « Թէպէտև ոմանք ի հերբայեցւոց կ'ըսեն, թէ այս բնա-
կան ու բժշկական իրաց վրայ ճառող Սոդոմոնի գիրքը, իրենց
պատեւազմաց և աւերմանց ժամանակ ուրիշ չատերու հետ կոր-
սուած ըլլայ, սակայն չի կրնար ուրացուիլ թէ ուրիշ մը յետոյ

յաջողեր է գտնել զայն. կամ մէկէ մը գաղափարուած, ու ձեռքէ ձեռք անցնելով՝ այս անժանօթ հեղինակին հասած, որ նոյն ոճով յետոյ ձկանց վրայ ալ նմանօրինակ գրութիւն մը երկասիրեց » :

(Նման գրուածք մի կը գտնուի նաև ի մեր հայ մատենագրութեան, Բարոյախօսութիւն կամ Խօսք յաղագս Բարոյախօսի մակագրով, և կ'ընծայուի սրբոյն Եպիփանիոս կիպրացւոյ. և են առակք և նմանութիւնք ի բարուց կենդանեաց՝ քաղելով անոնցմէ խրատական և հոգեւոր իմաստներ: Ուրիշ անգամ թերեւս առիթ ունենանք այս գրուածքին վրայ առանձին խօսելու):

Նեմեսիոսի գրուածքին միայն առաջին գլուխը գրուած է, ըսինք, այս երկասիրութեան մէջ, այն ալ մասամբ եւեթ. զի Բիցցամէնդի ուղած տեղը կը ցատքէ կ'անցնի, որ համառօտողին կամքին հետեանք է և ոչ գրչագրին աղաւաղութեան. թարգմանութիւնը վայելարան է, հաւատարիմ՝ և համաձայն յոյն բնկըզնագրին, ինչպէս բաղդատողը կրնայ յայտնի տեսնել, Նեմեսիոսի գրոց քննադատներուն անկարեւոր չեմ սեպեր այս քանի մի էջերը. միայն կէտերով կը նշանակեմ այն տեղուանքը զորս մէկդի ձգեր է, և կը յղեմ առաջին և վերջին տպագրին, 1565ին և ի 1802 հրատարակութեանց:

(Հոս մէջ կը բերէ այդ առաջին գլուխը, զոր մեր ընթերցողաց աւելորդ կը համարինք, և կ'անցնինք մեզի համար աւելի հետաքննական մասին):

* * *

Շատ յառաջ, կ'ըսէ, քան զեղբարս մեր և զհաւս (Խտալացիս) փափաքեցան Հայք ժառանգ ըլլալ Նեմեսիոսի գիտութեան, սնանիլ անով և վայելել. որք արդէն աստուածախօսական և պատմական ուսմանց մէջ՝ յունական գպրոցաց սիրողք էին և հետամուտք, Հաւանական չի թուիր որ Ասորիք՝ նկատմամբ այս գրքին՝ նախընթացաբար կամ յետոյ հետևողք եղած ըլլան իրենց. որով կրնանք ըսել թէ յարեւելս՝ եմեսացւոց եպիսկոպոսն Հայոց ձեռքով նոր կեանք մը ստացած է: Իրենց մէջ հմտից առաջնորդութեամբ կրնանք նկատել՝ երբ ի վաղուց կատարուած գործեր աւելի ծանօթանան ի մեր դարու, և յետոյ այնպիսի կերպով մը հրատարակութեան լոյս տեսնեն, որ ամենքն կարենան դատել և օգտուիլ:

Աս բանասիրաց մէջ յառաջագէմն է հայրն Սուքիաս Սոմալեան, իր համառօտ բայց շահագրգիռ գրքուկով, որ անանուն հրատարակուած է ի վենետիկ յամի 1829 և խորագիր օժնի « Պատկեր այլ և այլ հեղինակաց գրուածոց ի հնուց թարգմա-

նելոց ի հայ», և ասոնք են հմուտ Մխիթարեանին խօսքերը. « Սիւնեաց եպիսկոպոսն Ստեփանոս (յութերորդ գարու), տեղեակ և ամենավարժ թէ՛ յոյն և թէ՛ լատին լեզուաց, հասարակաց գովութեան արժանացած է հետեւել գրուածոց թարգմանութեամբ՝ որ իր անխոնջ գրչին արդիւնքն են: Գրուածոց սըրբոյն Գրիգորի Նիւսացւոյ՝ յորս կը բովանդակին. Ա. Գիրք կամ ճառ յաղագս բնութեան մարդոյ, Բ. Յաղագս մարդակազմութեան, և Գ. Ճառ յաղագս կուսութեան. իրենքն ալ թարգմանուած ի յոյն բնագրէ: Սակայն գիտել արժան է որ մարդկային բնութեան վրայ գրուածը՝ ի Մատենադարանի նախնի հարց կ'ընծայուի Նեմեսիոսի եպիսկոպոսին եմեսացւոց »:

Մեծ ուսումամբ մը, գէթ ինձ համար, կը ցատքենք ի 1880. որովհետեւ նոյն տարւոյն ի Ս. Ղազար վենետկոյ հրատարակուած Բազմալեպ հանդիսարանին մէջ (Հատ. 1Ը. 325-340) հայրն Արսէն Սուքրի կը սկսի խօսիլ Յաղագս բնութեան մարդոյ գրքին վրայ, նշանակելով անոր յարգը, թարգմանութեան որպիսութիւնը, և ձեռագիրներէ տալով քանի մի նմոյշ անծանօթ գանձուն: Հրատարակիչն աւելի գրքին վարդապետութեամբն կը զբաղի, քան անոր պատմութեամբ և յետագայից մտաց ու ձեռաց մէջ ունեցած և կրած վիճակովը. և կը վստահի այն քննադատից վրայ որ զՆեմեսիոս՝ արեան շրջանին ճարտար ստորագրող մը կը համարին: Սոմալեանի հետ կը հաստատէ որ թարգմանիչն հաւանականաբար եղած է Ստեփանոս Սիւնեցի, որ դարձոյց ի հայ զգրուածս Գրիգորի Նիւսացւոյ. « ոճն ալ յունարան է, կ'ըսէ, անանկ որ շատ տեղ իմաստքն անիմանալի կը մնան ». ուր մեզ լաւագոյն կը թուի ըսել թէ գծուար իմացք են հոն՝ ուր հայկական բառերու և ոճի տակ ուզուի յունաբար մտածել. որով թարգմանչին վրայ չենք կրնար ձգել ընդօրինակողաց պատկանած մեղադրութիւններն: Յետոյ քննադատն կը համեմատէ Սիւնեցւոյն խօսքերը Նեմեսիոսիններուն հետ, փոխանակ յունական սկզբնագրին իրեն առաջնորդ բռնելով գաղղիական թարգմանութիւնը. որ թերեւս ոմանց յընթերցողաց գիւրութիւն ընծայէ, բայց ինձ համար գովելի չէ: Որ և իցէ կերպով, ալ ճամբան բացուած էր, և հօրն Արսենի արդիւնքն է այս:

Վրան քիչ տարի անցեր էր, և Մխիթարեանք որ մտադիր են միշտ ճոխացընել զհայրենիս կամ նորանոր հրատարակութեամբք և կամ արդէն եղածներուն յարութիւն տալով, նոյն իրենց օրագիր-հանդիսարանին մէջ սկսան ամբողջ գրուածը հրատարակել (1887, հատ. ԽԵ), ուրիշ գիտնական միանձին մը

խնամք, Հ. Աթանասի Տիրոյեան. որ համառօտ նախաբանին մէջ կը յիշէ հին տպագրութիւններն, յետ անվերսականին որ ի 1565 և Մատթեայ. յորմէ օգտուեցաւ, ինչպէս ինքն ալ կ'ըսէ, բաղդատելու այն ընթերցուած՝ երն՝ որ ի հայկականին այնչափ ուղիղ չեն թուիր. տեղ տեղ ալ լուսաբանելով այնպիսի կերպով մը որ քննադատութեան սիրող և հետեւող ընթերցողին օգտակար ըլլայ, Ասոր մէջ իրեն օգնական առած է հայերէն լեզուով գտնուած Լոսմանց գիրք մը, որոյ թերեւս հեղինակ է Գէորգ Ալեւոացի: Տպագրութիւնը շարունակուեցաւ հետզհետէ հրատարակուած թերթերով (1887 և 1888 թուականաց). քիչ մը ատեն ալ դադարեցաւ լոյս տեսնելէն, և ի վերջ իններորդ գլխոյն դրուած տեղեկութիւն մը կը ծանուցանէր թէ հոն կ'ընդհատէր ուրիշ տեղ տնկուելու համար. և յիրաւի 1889 ին ամբողջ երկասիրութիւնն առանձինն հրատարակուեցաւ այս խորագրով. Նեմեսիոսի փիլիսոփայի եմեսացոյ յաղագս քնոյթեան մարդոյ:

Հրատարակչին անունը նշանակուած չէ. յառաջաբանն ալ փոխուած՝ ոչ եւս յաշխարհիկ լեզու, այլ ի գրաւորն. չենք գիտեր որուն ընծայել պատիւը. բայց որովհետեւ ծա՛օթութիւնքն նոյն են անոնց հետ որ արդէն դրուած էին ի Բազմավիպի, պարտկան կ'ըլլանք հեղինակ համարել զհայրն Աթանաս: Այսպէս կը հասնինք ի վախճանն. աչքէ անցընելով, ինչպէս ինքն ալ կը հրաւիրէ, քանի մը խօսքերն օգտակար Մատենադարանին հայկական քարգմանոյթեանց, ուր կը յիշատակէ և կը հետեի Սուրբիսանի:

Իսկ գրչագրաց նկատմամբ՝ թէպէտ և Մատենադարանն և Բազմավէպ և հրատարակողին յառաջաբանն կը նշանակեն թէ կը գտնուին ի վանս սրբոյն Ղազարու, բայց առանց տալու անոնց նկարագրութիւնը: Մխիթարեանք միայն կրնան ընծայել մեզ զայն, եթէ ուզեն, և մեք մեծապէս երախտապարտ պիտի ըլլանք: Երբ ամէն գրչագրաց ժամանակն և յարգ առջեւնիս դրուին, և կարող ըլլանք հանել այն ընթերցուածը՝ որ ուրիշները կը մեկնաբանէ կամ մէկգի դնել կուտայ, հայկական թարգմանութիւնն հաւատարիմ քոյր մը կ'ըլլայ յունական օրինակաց, և կուտայ այն լոյսը զոր կը ձգեն հայուն տարակուսելի ընթերցուածոց վրայ:

Հմուտ հայագէտն այս ուսումնասիրութենէն ետքը, զոր քաղելով թարգմանեցինք, զանազան օրինակք մէջ կը բերէ՝ բաղդատելով զյոյնն, — ինչպէս հիմայ հասած է առ մեզ, — ընդ հայկական թարգմանութեան, ընտրելագոյն գտնելով զմերն և լողագոյն. և կը յաւելու.

« Հայ տպագրին լուսանցից վրայ նշանակած բազմաթիւ գիտողութիւններէս, օրինակի համար և ըստ պատահման ասոնք միայն մէջ բերի. յորոց կը տեսնուի որ եթէ փութաջան և ծայրալիւր բաղդատութիւն մը ըլլուի գրչագրացն արեւելից, յունականաց մեծապէս պիտի օժանդակեն. և նոր տպագրողաց թէպէտ աշխատութիւնքն յաճախեն, բայց չահաւետ ալ պիտի ըլլան: Չեմ տարակուսիր որ ուսուցչապետն Պուրքհարտ չի մոռնար զայս: Իսկ ես իրեն դառնալով կ'աւարտեմ: Վիէննական ոչսոցմնասիրոչքեանց մէջ (ԺԱ. 262 և հետ.) քանի մի տեղուանք կը նշանակէ որ իրեն համար վիճելիք և հակառակելի կը թուին: Ասոնցմէ շատերը բոլորովին կ'անհետանան՝ եթէ հայերէնին գիմացը գրուին. որով կ'իմացուի թէ յոյն լեզուի սովորական՝ բառից և բացատրութեանց նըբութեան արդիւնք են. իսկ մնացածին համար՝ ահաւասիկ ինչ որ կրնամ յաւելու գերման բանասիրին իմաստուն և բարակ դիտողութեանց »: Հոս ալ իր խօսքը այլ և այլ օրինակներով կը հաւատարմացընէ, ուր հայկականն կ'ուղղէ, կը մեկնաբանէ և կը լուսաւորէ յոյն բնագիրն և անոր աղաւաղանք, զորս տեղուոյս համար աւելորդ սեպեցինք յառաջ բերել:

* *

« Հոս, — կ'անդրադարձընէ ապա իտալացի հայերէնագէտն, — աշուրնուս առջև ունինք զյոյնս և զհայս, ուսուցիչս և աշակերտ. քրիստոնեայ աշխարհի որ ազգը կրնայ պարծիլ որ հեյլենական դպրոցին հետեող եղած չըլլայ, կամ չօգտուած գիտութեանց և արուեստից այն հրահանգութենէն... Վրանին տիրող ազգաց լեզուին աղդեցութիւնը կրած են նաև իրենց լեզուք. և թէպէտ հիմայ մեծապէս բժշկուած, սակայն յոյն և հայկական մատենագրութիւնք դեռ եւս ունին վէրքեր. և այս երկու ազգաց իրարու նմանակցութեանն անտարբեր աչքով նայելու չէ:

« Սակայն ինչպէս կը պատահի յաշխարհի, շատ աղէկն ալ երբեմն կ'ունենայ իր մնասակար մասը: Այս երկու հին ազգաց մատենագրական մեծվայելութիւնը կ'ահաբեկէ զնորս: Արժան է որ երևակայութեան թռիչք՝ ազատ ըլլան, և նպատակն առ որ կը գիմէ՝ առջին և ոչ ետեւը մնացած. նախկին դաստիարակն՝ ճամբան ցոյց տայ, զօրացընէ խորհրդովքն, և յետոյ սլանայ և ծածկուի. ուր եթէ յաւիտենական հրահանգիչ մը ուզենայ միալ, չորս կողմն ուրիշ բան չի տեսներ՝ բայց տղայք ծերունիք: Այն ատեն՝ ինչ որ Եւրոպայի համար մեծարեալ բարձրութիւն է հանճարոյ, Յունաստանի և Հայաստանի համար կը

դառնայ կ'ըլլայ յարգի՝ բայց միշտ դառն բռնաւորութիւն մը։ Արժան է ուսումնասիրել Սոփոկլի և Պղատոնի գրքերով։ Բայց ջանալ անոնց լեզուի և կորովոյ շնորհքովը ալ աւելի գեղեցիկ և ընտրելագոյն երևնալ, տէր մնալով միշտ իրենց լեզուին։ Ուր յայդ նախկին աղբերաց անբաժան մնալու փափաքը՝ կը դնէ մտքիդ մէջ խօսք մը որ ոչ եւս է կենդանի. և անոր տիրած աւտենիդ՝ դժուարին կ'երևնայ անկէ զատուիլը կամ մոռնալը։ Հայք չունին իրենց մատենագրութեան մէջ զնմանիս Սոփոկլի և Պղատոնի։ Բայց ընտիր և հին ոճոյ ընտիր առաջնորդներ, յԱստուածաշունչ գիրս, ի պատմիչս, ի հարս և յեկեղեցական ճարտարխօսութեան։ Որով թէ հայն և թէ յոյնն՝ դարէ մը ի վեր, եռանդուն աշխատանքովն զոր ունին՝ նոր ժամանակաց մտածութեանցն համաձայնող՝ նոր ոճ և ձև ստեղծելու, կը ծփան ժողովրդական և աշխուական ոճոյ մէջ։ և որ աւանդութեանց ազդեցութեամբն, նոյն ոճն է որով վարուեցան Պերիկլեսայ և Գրիգորի Լուսաւորչին ժամանակակիցքն և ընկերք»։*

ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԻՈՅ

(Տես յ'էջ 344)

Թ

Գիմնագիտունին մէջ ընդունելութիւն մը. — Երջագայութիւն ի հովիտն Կալիֆարլի. — Հոփտածորն Գանձոց. — Աձար. — Մարախի ջարդ. — Եռչի քաղաքին ձարտարութիւնքն և վաճառականութիւնը։

Եր բաժնուիք յիշխանէն Միրզա-Ղուլի, մեծապէս գոհք իրեն հետ ծանօթանալնուս համար, և կ'երթանք ի գիմնագիտուն՝ ուր ի պատիւ մեր ընդունելութիւն մի պիտի արուէր։

* Թուի թէ յօգուածիս հեղինակին գեւ անծանօթ է Նմանսիոսի գրոց հոյ թարգմանութեան վրայ ընտիր և հմտական քննադատութիւնն որ հրատարակիցուի Հանդես ամսօրեայ։